ԹԱՏՐԵՐԳՈՒԹԻՒՆ

Թ Ե Մ Ի Ս Տ Ո Կ Լ Է Ս

ԴԵՐԱՍԱՆՔ

Քսերքսէս, *արքայ Պարսից*
Թեմիստոկլէս, *զօրավար Աթենացի*
Նէոկլէս, *որդի Թեմիստոկլեայ*
Ագեսիլայոս, *որդի Թեմիստոկլեայ*
Լիւսիմաքոս, *պատգամաւոր Աթենացւոց*
Միհրան, *մտերիմ Քսերքսեայ*

Տեսարանն է 'ի Պարսկաստան, յարքունիս Քսերքսեայ։

ԱՐԱՐՈՒԱԾ ԱՌԱՋԻՆ

ՏԵՍԻԼ ԱՌԱՋԻՆ

ԹԵՄԻՍՏՈԿԼԷՍ, ՆԷՈԿԼԷՍ

Թեմիստոկլէս. Կա՛ց, զի՞ գործես

Նէոկլէս. Թո՛յլ տուր ինձ պատուհասել զգոռոզն, եթէ ո՛չ լուար, հա՛յր, զիա՞րդ արար բանիցդ պատասխանի, և մինչև ցե՞րբ ժուժկալիցեմք նախատանաց։

Թեմիստոկլէս. Ցածի՛ր 'ի տարապարտ սրտմտութենէդ. չե՛նք յԵլլադա, և ո՛չ խուժան մարդկոյդ երկրպագուք բաղդին՝ շուրջ են զմեօք. ամենայն ինչ կերպարանափոխ եղև Նէոկլէս, և ըստ փոփոխել բաղդին՝ փոխեցի և իմաստունն։ Յարքունիս թշնամեաց կամք. ո՛չ ևս յիս յուսացեալ են Աթէնք, անկայ 'ի սիրոյ նոցա, և մերկ կողոպուտ, անաշխարհիկ և անծանօթ՝ վայրաց 'ի վայրս հալածական երթամ։ Ամենայն ինչ կորեաւ յինէն, և միայն մնաց ինձ, այլ պանծագոյն քան զամենայն, արիութիւն ընդակից։

Նէոկլէս. Սակայն, ներեա՛ ինձ հայր, այդ քո անդրակազմ արութիւն զրգռէ զոգիս իմ։ Տարագիր մերժեալ 'ի պարսպաց զորս արեամբ քով պահեցեր, և հալածեալ ապաշնորհ հայրենեացդ անմեղկելի ոխութեամբ՝ որ ամենայն ուրեք զհետ մտեալ դարանի կենաց քոց՝ չտալ քեզ տեղի անքոյթ ընդ երկիր, և տակաւին ժուժկալես անտրտունջ. ա՜հ, ուստի՞ իցէ քեզ այդ սիրտ անսասան յանդրնդել չարիսդ։

Թեմիստոկլէս. Յասպարէզ ընթացից կենաց հերդ և համբակ՝ զարմանաս, և անընդել թուի քեզ ամենայն։ Ներեալ հասակիդ. զարմանք՝ տգիտութեան դուստր է՝ և մայր իմաստութեան։ Մեծամեծք յառաքինութեանց՝ ատելութեամբ յաճախ փոխարինին. ընդ այդ զի՞ զարմանաս։ Այր ապաշնորհ բազում այն է՝ զի զյիշատակ երախտեացն զոր ընկալաւ՝ ատեայ յերախտաւորն։ Այսպէս և մեք բաժանեցաք. սմին իրի ատեցեալ եմ 'ի հայրենեաց, և սիրեմ զնա։

digitised by A.R.A.R.@

Նէոկլէս. Եթէ մարդկան միայն անիրաւեալ էր քեզ, ո՛ հայր, համբերէի արդեօք, այլ անիրաւեն քեզ և դիք։

Թեմիստոկլէս. Իսկ ընդէ՞ր։

Նէոկլէս. Եթէ թշուառութիւնք այսորիկ՝ առաքինութեանց քոց իցեն մրցանակք։

Թեմիստոկլէս. Եւ համբուն գիտիցես զինչ 'ի թշուառութեանց շահ իցեն, և ո՛ր վնաս 'ի յաջողութենէ։

Նէոկլէս. Զի՞նչ։

Թեմիստոկլէս. Բարգաւաճէ 'ի վիշտս առաքինութիւն, և յաջողութեամբք խամրի։ Ականակիտ հոսեն ջուրք գահավէժք, և հանդարտեալ պղտոր գնան։ Սուսեր 'ի մարտս նշողեալ՝ ժանգահարի անգործ 'ի խաղաղութեան։

Նէոկլէս. Այլ պայծառ յաղթութեանցն յաջորդեալ թշուառութիւնք մեծամեծք...

Թեմիստոկլէս. Առաւել քան զնախկին փառս իմ՝ նախանձելիք իցեն յետնոց։

Նէոկլէս. Ա՛յդպէս իցէ. սակայն յուժգ՞ բռնադատութենէ եկիր այսր, հայր, յաւելուլ քեզ վտանգս. եթէ ո՛չ չառ իցէ ատելութիւն համազգեաց՝ զի և զՊարսիցն խնդրես ածել զքև զգասումն։ Մոռացա՞ր զի քև առաջնորդեալ Աթէնք՝ ընդդէմ աշխարհակալ զօրացն Ասիոյ խիզախեաց, ծաղր արար զՔսերքսէս և զկամուրջն զանհանճարոյ գործ. աղէ մի այդպէս վաղանցուկ կարծես զոխութիւն Թագաւորի։ Եթէ յանկարծ յուժեքէ մատնիցիս, ո՞ այն զօրավիգն իցէ քեզ։ Թշնամիք բազումք՝ բազում ուրեք են քեզ. այլ աստ՝ ամենեքեան, գիտիցես։ Քոյին քաջութեան խորհրդովդ՝ 'ի մեծի կոտորածին կէսք զբարեկամս կորուսին, այլք զսիրելիս, որդիք 'ի հարց որբացեալ և հարք անզաւակեցան։ Խնայեա՛, հայր, յանձն քո, փախիցո՛ւք աստի...

Թեմիստոկլէս. Լռեա՛ լեր, ահա գայ ոք այսր առ մեզ. խօյս տուր և մնա ինձ ուրեք առանձին։

Նէոկլէս. Եւ զինչ իցէ հայր, եթէ աստ ընդ քեզ կացից։

Թեմիստոկլէս. Մի՛, խիթամ յանծայթ տիոցդ, և աստ բազում ժուժկալութեան պէտք են։

Նէոկլէս. Այլ արդ...

Թեմիստոկլէս. Մի՛ ևս, անսա՛ ինձ։

Նէոկլէս. Գոնեա 'ի մեծի վտանգիս խնայեա՛ 'ի կեանս քո հայր։

Թեմիստոկլէս. Լռեա՛ լեր, 'ի բաց կաց յինէն, և ահն կալջիր յուսով։

Նէոկլէս. Ո՞ր յոյս կամ զինչ պատճառք ակնկալութեան, հայր։ Ո՞ր աստղ բարեբար առաջնորդեսցէ ինձ 'ի յոյս։ Քան 'ի սպառնալեաց անկարեկիր բաղդին՝ կասկածեմ յանընկճելի արիութենէդ. (Ելանէ)։

ՏԵՍԻԼ ԵՐԿՐՈՐԴ

ԹԵՄԻՍՏՈԿԼԷՍ, ԱԳԵՍԻԼԱՅՈՍ, ՄԻՀՐԱՆ

Թեմիստոկլէս. Ոչ յաննշանից է այրն, որպէս ինձ 'ի կերպարանացն թուի. թերևս և մարդասէր ոք. 'ի սմանէ տեղեկացայց... Այլ ո՞ պատանին առոյգ առ նմա հելլենացի ձևով։

Ագեսիլայոս. (առ Միհրան) Լո՛ւր ինձ քաջդ Միհրան։

Միհրան. (շտապելով) Չէ ժամ դանդաղելոյ, սիրեցեալդ Ագեսիլայէ, ՚մնայ ինձ թագաւորն։

Ագեսիլայոս. Այլ և ո՛չ դայս ասասցես ինձ՝ եթէ ճշմարտութեամբ իցեն հրամանք արքայի։

Միհրան. (նոյնպէս) Եւ կարի իսկ քաջ, որ զԹեմիստոկլէս կենդանի կամ մեռեալ ածցէ առ Քսերքսէս՝ պարգևս մեծ 'ի նմանէ ընկալցի։

Ագեսիլայոս. «Եղո՛ւկ հայր»։

Թեմիստոկլէս. (Մատուցեալ առ Միհրան) Ցո՛յս տէր, եթէ գտի շնորհս առաջի քո՝ ասա՛ ինձ եթէ կարե՞մ մատչել յատս արքայի. երբ և կամ ո՞ւր։

Ագեսիլայոս. «Մի՛ եթէ զհօրէ՞ իմմէ երթայ գուշակել»։

Միհրան. (արհամարհանօք) Ցայլմէ ուսիր զայդ։

Թեմիստոկլէս. Ներեա ինձ եթէ յանցեայ, հիւրեմ և օտար, անտեղեակ եղէ և մտի աշխարհիս։

Միհրան. Ողջամբ մնայ, Ագեսիլայէ։

digitised by A.R.A.R.@

ՏԵՍԻԼ ԵՐՐՈՐԴ

ԹԵՄԻՍՏՈԿԼԷՍ, ԱԳԵՍԻԼԱՅՈՍ

Թեմիստոկլէս. Գոռո՛զ ամբարտաւանութիւն։

Ագեսիլայոս. «Մարդասէր աստուածք, խոտորեցուցէք 'ի սահմանաց աստի զչարիքս հօրն իմոյ»։

Թեմիստոկլէս. «Ե՛կ, 'ի պատանւոյս գէթ ստուգեսցուք ինչ»։ Ա՜հ՜ դու ծնունդ դիւցազանց, եթէ երկինք... «Բա՛րէ ոչ նոր է ինձ այդ տեսիլ դիմաց»։

Ագեսիլայոս. «Եթէ ոչ խաբիմ, ո՛վ դիք, անշուշտ հայր իմ է կամ նման յոյժ նմա»։

Թեմիստոկլէս. Ասա ինձ. . .

Ագեսիլայոս. Թեմիստո՛կլ.

Թեմիստոկլէս. Ագեսիլայէ.

Ագեսիլայոս. Ո՛հ հայր իմ.

Թեմիստոկլէս. Ո՛հ որդեակ իմ.

Ագեսիլայոս. Ապրեցո՛ զանձն քո.

Թեմիստոկլէս. Եթէ տակաւին կենդանի իցես։

Ագեսիլայոս. Ո՛հ, փութա՛ հայր, ապրեցո՛ զանձն քո. ո՛ր աստ եղեռնաւոր առաջնորդեաց քեզ այսր յարքունիս։ Քսերքսէս մթերեալ քինու՝ զարիւն քո խնդրէ, սակ հատեալ է գլխոյ քում, պարգեւք խոստացեալ են գուշակող զքէն... փութա հայր, մի՛ յապաղեր, գուցէ մատնիցիս։

Թեմիստոկլ. Տարապարտ երկիւղիւդ այդու մատնիցիմ անշուշտ. հանդարտ լեր և տո՛ւր պատասխանի։ Ցորժամ յաղմկէ պատերազմացն ապրեցուցեալ՝ առաքեցի զքեզ յԱրգոս, ո՞չ նուակոծ եղեր զճանապարհայն։

Ագեսիլ. Այո՛, հայր, այլ 'ի կորնչել ամենեցուն որ ընդ իսն էին՝ ես միայն ապրեցայ, զազատութիւն ընդ կենաց փոխանակեալ։

Թեմիստոկլ. Ո՞րպէս.

Ագեսիլ. Նաւ թշնամի 'ի վերայ հասեալ, կիսամեռ զիս 'ի վայրենի կոհակայն թափեաց, և ած այսր գերի։

Թեմիստոկլ. Եւ գիտա՞ց ոք աստ զբաղդ քո կամ զծնունդ։

Ագեսիլ. Բնաւ և ոչ ոք։ Բայց Քսերքսեայ գութք անկան ընդ իս, և յանձն եղէ յանծանօթս միում 'ի մտերմաց նորա յաւագաց դրանն, որ արդ իսկ անց գնաց ընդ այս շտապաւ։ Այլ եթէ գիտէի՛ր, հայր, զիա՛րդ անձկով քո հալէի հանապազ, ո՛րպէս սրտեռանդն առ դիսն պաղատէի միւսանգամ շնորհել ինձ զքեզ. այլ աւա՜ղ, այլազգ կարծէի թէ լուիցեն Երկինք աղօթից իմոց։

Թեմիստոկլ. Եւ զի՞նչ իցէ որդեակ. քաջ լեր և սփոփեաց, արտասուաց հա՛ւ է խնդութիւն, և անընդմէջ յաջորդեն միմեանց։ Այսօր իսկ հնար է յեղուլ բաղդին։ Ահա այժմէն թեթևացան ինձ վիշտք՝ զի ողջամբ գտի աստ զքեզ։

Ագեսիլ. Այլ զիա՛րդ գտեր զիս, հայր. աւա՜ղ, յօտար երկիր, 'ի տառունս գերութեան. ո՛րպէս եկիր այսր, անոք, միայնակ, անաշխարհիկ և հալածական։ Ո՛հ, հայր իմ, եղկելի հայր, ո՞ւր այն քո նախկին ընտանիդ փառք անկապուտ, ո՞ւր շուք պերճ, պաշտօնէից խումբ, գանձք և բարեկամք... Անագորո՛յն դիք, քաղա՛ք ապաշնորհ, զիա՞րդ ընդ քե հանդարտէ երկիր, և ոչ փեռեկի կլանել զքեզ, կամ շանթք երկնատեղացք յապաղեն լիզանել զքեզ։

Թեմիստոկլ. Ուշի՛մ լեր, Ագեսիլայէ, մի՛ կարի մխեալ բարկութեամբ։ Որ հայրենեաց չարիս մաղթէ՝ իմ որդի ոչ է. ամբարշտութեան խորհուրդք են, և ոչ վայրիկ մի ներեսցէ զայդ Թեմիստոկլ։

Ագեսիլ. Սակայն ո՞րչափ պաշտպանես դու նմա հայր, յաւելու նա առ քեզ 'ի չարիս։

Թեմիստոկլ. Բաւ է, մի՛ ևս ա՛յլ...

Ագեսիլ. Այլ աղէ դու միանգամ աճապարեա, հայր, խոյս տուր 'ի սահմանաց աստի։

Թեմիստոկլ. Եւ զմէ՞ կասկածես, չիք ոք որ ճանաչէ զիս։

Ագեսիլ. Զի՞ք ոք որ զքեզն ճանաչէ. բա՛րէ, ծածկեսցի՞ ուրեք Թեմիստոկլ անծանօթ։ Գերապանծ ոգւոյն առաքինութեանցն նշոյլք 'ի դէմս փայլատակեալ՝ եթէ ո՞չ գուշակեսցեն զնա։ Եւ այսօր իսկ առաւելագոյն վտանգ է մեզ. հրեշ-

digitised by A.R.A.R.@

տակ պատգամաւոր յԱթենայ եհաս այսր 'ի Շօշ, և ո՞ զքեզ յաչաց նորա և ընկերացն ծածկեսցէ։

Թեմիստոկլ. Եւ ո՞ պատգամաւորն է՝ եթէ գիտիցես, կամ առ ի՞նչ գալուստ նորա։

Ագեսիլ. Ցայժմ ոչ ինչ գիտացի, այլ ընդ հուպ եկեսցէ նա առ արքայ՝ տալ զպատգամսն։ Ո՞չ տեսանես, հայր, զհա՞րդ ահա ամբոխ ուժգին խուռներնթաց լինին 'ի վայրն։

Թեմիստոկլ. Եւ իցէ՞ օրէն ամենեցուն երթալ անդր։

Ագեսիլ. Եւ կարծեմ իսկ քաջ։

Թեմիստոկլ. Թո՛յլ տուր ապա զբազմամեայ ցանկութեան իմոյ զտենչ՝ յագեցուցանել այսօր, և 'ի մօտոյ դէմ՝ յանդիման տեսանել զթշնամին իմ։

Ագեսիլ. Անսա՛ հայր, զի՞ գործես. եթէ ծանիցեն զիս, յերկիւղէ։ Ա՜հ ոչ, եթէ սիրես զիս՝ փոխեաց հայր 'ի խորհրդոց այտի։ Ահաւասիկ միւսանգամ արտասուօք և գաղութեամբ մատչիմ 'ի համբոյր աննկուն ձեռինդ, և երդմնեցուցանեմ զքեզ յահաւոր անուն աստուածոց, 'ի բազուկ քո և 'ի սէր հայրենեաց՝ զոր կարհուրիս թշնամանել, որում անյիշաչար սիրով փոխարէն չարեացն խնամարկես։

Թեմիստոկլ. Ե՛կ մատիր առ իս 'ի գիրկս իմ, որդեա՛կ սիրեցեալ Ագեսիլայէ։ Այդ տագնապ երկիւղիդ՝ հայրասէր գորովոյ է. այլ քա՛ջ լեր, մի՛ անկցի սիրտ քո, հոգ խնամոց անձին իմոյ՝ յիս կացցէ։ Ողջամբ մնա որդեակ իմ, և զպատահալիս չարեաց անողորմելի բաղդին՝ յինէն ուսիր արհամարհել։ Որ մանչելոյ ցասման ոխերիմ բախտին գիտէ հանդարտել, զպատահալիս նորա աներկիւղ ծաղրէ։ Ի ծով ալէկոծ մարգի նաւաստի, և 'ի սպառնալիս ահագին բախտին՝ արին քաջասիրտ. (Ելանէ)։

ՏԵՍԻԼ ՉՈՐՐՈՐԴ

ԱԳԵՍԻԼԱՅՈՍ, ՄԻՀՐԱՆ

Ագեսիլ. Խիթամ, կասկածեմ ահիւ, սարսին ոսկերք իմ, 'ի ձեզ, ով դիք, 'ի ձեզ զհայրն իմ աւանդեմ ապաստան... Այլ ահաւասիկ դարձ առնէ Միհրան, գիտէ նա անշուշտ զպատճառս գալոյ պատգամաւորին։ Լո՛ւր ինձ քաջդ, եթէ գիտիցես՝ զի՞նչ անուն իցէ հելլէն պատգամաւորին։

Միհրան. Լիւսիմաքոս անուն է նորա։

Ագեսիլ. «Բարեկամն մեր». իսկ առ ի՞նչ գայցէ։

Միհրան. Որպէս լուայ հաւաստեաւ՝ 'ի խնդիր Թեմիստոկլեայ։

Ագեսիլ. «Ի խնդիր հօրն իմոյ. բա՛բէ և նա՛ ուրեմն յաւելու 'ի թշնամիս»։

Միհրան. Եւ արդ ժամ է երևելոյ նորա արքայի. անդ համարձակ յայտնեսցին իրք, եւ ես արդ անդր սրանամ. (Ելանէ)։

Ագեսիլ. Եթէ ճշմարտութեամբ 'ի խնդիր հօրն իմոյ եկեալ իցէ Լիւսիմաքոս. ա՜յ նենգաւոր բարեկամ, ա՞յս իցէ սէր բարեկամութեան նորա առ հայրն իմ։ Այսպէս և հաւատարիմք կարծեօք 'ի բարեկամս՝ ընդ բաղդին փոփոխին, բա՛բէ, և ո՞ կասկածէր։

ԱՐԱՐՈՒԱԾ ԵՐԿՐՈՐԴ

ՏԵՍԻԼ ԱՌԱՋԻՆ

ԹԵՄԻՍՏՈԿԼԷՍ, ՆԷՈԿԼԷՍ

Նէոկլ. Ցո՞ դիմեալ երթաս, հայր. ոչ կարեմ կալ 'ի վերայ մտացդ։ Զահի հարեալ դողամ յամենայն ակնարկութենէ։ Թուի ինձ եթէ 'ի քեզ միայն ամենեքին պշուցեալ են։ Այլ ահա դան պաշտօնեայք արքայի, ահա և արքայ ինքնին, աղէ՛ հայր. փախիցուք աստի։

digitised by A.R.A.R.@

Թեմիստոկլ. Ո՛չ այդպէս, մեկուսի 'ի խուռն ամբոխին կալցուք զտեղի։
Նէոկլ. Սակայն վտանգ մեծ է, հայր։
Թեմիստոկլ. Բաւ է այդ, մի՛ եւս։
Նէոկլ. Ամենայն ոսկերք իմ լնուն դողութեամբ։

ՏԵՍԻԼ ԵՐԿՐՈՐԴ

ԹԵՄԻՍՏՈԿԼԷՍ, ՆԷՈԿԼԷՍ, ՔՍԵՐՔՍԷՍ, ՄԻՀՐԱՆ, ՆԱԽԱՐԱՐՔ

Քսերքսէս. (Առ մի ումն 'ի բիկնապահաց)։ Եկեսցէ արդ հելլէն պատգամաւորն, լուիցուք զինչ պատգամք իցեն։ Յայս վայր ուրեմն, Միհրան, 'ի ցասմանէ մերմէ ծածկի Թեմիստոկլ. ա՛յսպէս ասա ո՛չ ինչ զօրեցին պարգեւք եւ խոստմունք։
Միհրան. Այլ ո՛չ 'ի սպառ թաքիցէ, տէ՛ր արքայ. որոգայթք բազմադիմի լարեալ են նմա 'ի կորուստ։
Քսերքսէս. Ցորչափ զօդս զայս շնչէ հելլէնն՝ խաղաղութիւն մերժեալ է յինէն։ Քսերքսէս տեսաւ 'ի նմանէ փախուցեալ. եւ յամբոխէ նաւաց՝ ընդ որովք Եգեան միանունքն հեծեցին՝ զփայտն չնչին եթող նա ինձ ապաւէն փախըստեան, եւ ջուր աղտաղտուկ արիւնախառն 'ի ծարաւ իմ մատոյց. եւ որ յոյսքան յաղթանակ 'ի վերայ իմ պանծայ՝ ապրեսցի՞ 'ի սրտմտութիւն ինձ եւ 'ի նախատինս անմահ. (Երթայ բազմել 'ի գահ)։
Նէոկլ. «Արդ լուա՞ր հայր»։
Թեմիստոկլ. «Լուայ»։
Նէոկլ. «Փախիցուք ապա»։
Թեմիստոկլ. «Լո՛ւռ լեր»։

ՏԵՍԻԼ ԵՐՐՈՐԴ

ԼԻՍԻՄԱՔՈՍ, ԹԵՄԻՍՏՈԿԼԷՍ, ՔՍԵՐՔՍԷՍ, ՄԻՀՐԱՆ, ՆԱԽԱՐԱՐՔ

Լիսիմաքոս. Աթենական պետութիւն, արքա՛յ քաջ, եւ 'ի Թշնամին զարքունականն մեծարեալ զԹագ, 'ի մեծութենէ սրտիդ որ հզօր իշխանութեանդ է հանգէտ՝ շնորհս խնդրէ, մեծ քան զամենայն պարգեւ։
Քսերքսէս. Միայն թէ խաղաղութեան չիցէ. անց բազմեաց, եւ յայտնագոյն ճշգրտեսցին բանք. (բազմի Լիսիմաքոս)։
Նէոկլ. «Ո՞չ ինքն Լիսիմաքոս է հայր»։
Թեմիստոկլ. «Նոյն ինքն»։
Նէոկլ. «Օգնեսցէ՞ ինչ մեզ բարեկամութեամբն»։
Թեմիստոկլ. «Լո՛ւռ լեր, կամ երթ 'ի բաց»։
Լիսիմաքոս. Զվնասակար հասարակաց խաղաղութեան բառնալ կամ նուաճել՝ Թագաւորաց ամենեցուն օգուտ պահանջէ, եւ Թշնամեաց մատնել ատա զքէն միմեանց պարտք են։ Մեղուցելումն ասպնջական՝ հասարակաց վնասակար է՝ տեղի ապաւինի յանցաւորաց կացեալ։ ԶԹեմիստոկլ «ո՛հ, ներեա ինձ, բարեկամ քաջ» եւ ինքն արքայ գիտէ յանցուցեալ, եւ յարքունիս այսր լսեմք զնա ապաւինեալ. զոր պահանջելն մարթ էր, պարգեւ զնա խնդրեն Աթէնք։
Նէոկլէս. «Ո՛վ անագորոյն քաղաքացիք, ո՛վ բարեկամ նենգաւոր»։
Թեմիստոկլ. «Ո՛վ հաւատարիմ քաղաքացի»։
Քսերքսէս. Եթէ առուգիւ այս պատճառք իցեն առ մեզ պատգամաւորութեանդ, ո՛վ դու, կամ թէ այլ ինչ ներքոյ պատրուակեալ, ո՛չ քննեմք, եւ ո՛չ զպատգամաւորիդ հաւատարմութիւն։ Այլ ճոռոմ ճարտարխօսութիւն՝ զծըպըրհութիւն յանդուգն խնդրոյդ պատրուակել ոչ կարաց։ Զխաղաղութենէ Աթենայ ինձ զի՞ փոյթ է, կամ թէ հրամանաց ձերոց իցեմ սպասաւոր. եւ բնաւ ո՞ զնորաձեւ կարգ սահմանեաց 'ի մէջ Թշնամեաց։ Օրէ՞նս եկիր տալ

digitised by A.R.A.R.@

այսր առաջի իմ, թէ խրատտու։ Ի խրատտուէդ կասկածեմ, և օրինացդ ոչ հնազանդիմ՝։ Է՛հ, մի՛ այդպէս խրոխտացեալ պերճանայք յաղթութեամբ. բախտ Աթենայ՝ խարխուլ յերերի կայ տակաւին, և ճոխապարհք՝ բաց են դեռ առաջի Քսերքսեայ։

Լիսիմ. Այլ զի՞նչ օգուտ է ձեզ 'ի Թեմիստոկլեայ։

Քսերքսես. Ցուցեա՛ յորժամ լինի ընդ ինև։

Լիսիմ. Զի՞ ևս է այդ։

Քսերքսես. Եւ ոչ թէ էր՝ համարս ստիպէի տալ ձեզ։

Լիսիմ. Է՛հ, մի՛ դու, արքայ քաջ, մի՛ յայժ առնլութեամբ հելլէն անուանն ջնրանիցիս. եթէ խաղաղութեանն զօդ . . .

Քսերքսես. Աղէ տակաւին զխաղաղութինէ՞. պատուիրեցի քեզ չխօսել։

Լիսիմաքոս. Եւ կարծէ՞ իսկ քաջ, սակայն...

Քսերքսես. Սակայն չա՛տ է, ծանեաւ զխորհուրդս քո և ծանուցի զիմս. արդ մեկնել կարես։

Լիսիմաքոս. Մեկնեցայց. սակայն եթէ այդպէս առեալ է խաղաղութիւն քեզ, այլ մի՛ գոնեայ արհամարհութեամբդ պանծայիր։ Մի՛ զթշնամի արհամարհել՝ խրատեցաւ 'ի մօտոյ տուժիւք իւրովք Ասիա։ Յորժէ ոչ կասկածեա՝ հզօր բազում անգամ պատահէ. «Եղանէ»։

ՏԵՍԻԼ ՉՈՐՐՈՐԴ

ՔՍԵՐՔՍԷՍ, ՄԻՀՐԱՆ, ԹԵՄԻՍՏՈԿԼԷՍ, ՆԷՈԿԼԷՍ, ՆԱՒԱՐԱՐՔ

Քսերքսես. ԶԹեմիստոկլէս 'ի Պարսս խնդրեն Հելլէնք. հայեա Միհրան, խոյզ խնդիր արա, և եթէ է ստուգիւ՝ զտէր քո արգահատեա։ Ա՛հ, մինչև անօրինին ելեալ 'ի սպանդ՝ ոչ յագեցի սրտմտութիւն՝ որ զիս կեղեքէ։

Նէոկլէս. «Տակաւին կա՛մ հայր, և ո՛չ խուսափես»։

Թեմիստոկլէս. «Արդ ժամ է աւասիկ, մատիցուք 'ի գործ»։ «Անցանելով ընդ մէջ բիւրապահաց»։

Նէոկլէս. «Լո՛ւր ինձ հայր, անսա՛ աղաչեմ»։

Թեմիստոկլէս. Արեաց տէր։

Միհրան. Բարէ՛ք յանդուգն ժպրհութեան։ «Առ բիւրապահս» ի բաց հանէք զդա 'ի վայրացս։

Թեմիստոկլէս. Ո՛չ այդպէս սովորեցին դիք՝ ապախտ առնել զուխտս մահացուաց։

Միհրան. Ի բաց կաց այր դու։

Քսերքսես. Մի՛ այդպէս, թող լուիցուք. խօսեա՛ց հիւրդ, զի՞ խնդրես։

Թեմիստոկլէս. Հալածեալ 'ի բախտէ՝ ապաւէն խնդրեմ, և ոչ գտանեմ. Որմիզդ և Քսերքսէս կարեն ապրեցուցանել զիս։

Քսերքսես. Ո՞ իցես՝ զա՛յն ասա։

Թեմիստոկլէս. Աթենացի եմ։

Քսերքսես. Եւ այր հելլէն աթենացի՝ ժպրհեցա՞ր կալ առաջի իմ։

Թեմիստոկլէս. Անուն հելլէն ասա 'ի մեզս է, գիտեմ և ես։ Այլ այս մեղք՝ մեծապէս վաստակօք քաւին 'ի յիս։ Ո՞չ զԹեմիստոկլէս խնդրես, արդ աւասիկ ածի զնա առ քեզ։

Քսերքսես. Զի՞նչ ասես. ճշմարտութեամբ իցեն բանքդ։

Թեմիստոկլէս. Յառաջ թագաւորի ստել չէ օրէն։

Քսերքսես. Ո՜վ խնդութիւն. և զի՞նչ հատուցից. աղէ՛ ասա ո՛ւր իցէ անօրէնն, ատելին անձին իմոյ։

Թեմիստոկլէս. Ահաւասիկ առաջի քո է, արքայ։

Քսերքսես. Եւ ո՞ իցէ։

Թեմիստոկլէս. Ես ինքն։

Քսերքսես. Դո՛ւ Թեմիստոկլէս։

Թեմիստոկլէս. Այո՛, դիւցազանց տէր, ես ինքն եմ Թեմիստոկլէս։

Նէոկլէս. Երկի՛նք, յո՛վ Թագեայց. «Եղանէ»։

Քսերքսես. Ա՛յդպէս ապա խաղ համարիս զպատուհն մեր. ապա...

digitised by A.R.A.R.@

Թեմիստոկլէս. Մի՛ այդպէս երագեր 'ի դատաստան, տէր իմ. լո՛ւր նախ և ապա կնքեսջիր զդատակնիքս։ Ահա առաջի քո է Թեմիստոկլէս՝ բաղդին ծաղր, աստուածոց խաղալիկ։ Զգահոյս քո սասանեցուցեալ՝ արդ առ քեզ գամ, և զքո զթութիւն պաղատիմ զօրավիգն ինձ։ Գիտեմ հզօր զարքայ, և ցասումն նորա ոչ էր յինէն անծանօթ, այլ 'ի ներող գթութիւնն յուսացայ. յանքան առաքինութիւնդ չի՛ք ոք որ ոչ յուսասցի։ Առաջի քո կամ, և բաղդն իմ 'ի ձեռին քում է. հզօր ես՝ և գթութիւն և վրէժխնդրութիւն առնել ընդ իս։ Եթէ փառացն բոց գեղանի 'ի սիրտ քո վառեցաւ, ահա ասպարէզ լայն բացեալ առաջի՛ արժանի քում առաքինութեանդ՝ շահատակել համարձակ, յաղթել անձինդ, յաղթողդ աշխարհի. ա՛յլ կարկառեա 'ի փրկութիւն թշնամւոյ՝ որ ընդ քև կայ։ Իսկ եթէ բոց վրէժխնդիր յերակունս քո ճարակի, ճգնեաց, և վայրկ մի զարմանութիւն 'ի բաց եղեալ, խորհեսջիր մ՛ր շահ իցէ. կորուսանե՛լ զթշնամի օգտակար քեզ, եթէ բարեկամ հաւատարիմ ունել զնա։ Թագաւոր ես հզօր, խորհեաց. այր հէգ և հալածական գթութիւն 'ի քէն պաղատի, և մ՛ր հաճոյ իցէ քեզ՝ տուր դատակնիք։

Քսերքսէս. «Անման աստուածք, սիրտ անվեհեր քան զայս, ո՞ եսես. ո՛ առաքինութիւննոր, չքնա՛ղ քաջութիւն։ Թշնամի ոխերիմ՝ անգէն, միայնակ, համարձակի՛ կալ առաջի իմ, և 'ի գթութիւն իմ յուսալ։ Է՛հ ոչ, անցոյց զանցոյց ղցասմամբս իմով»։ Եւ զի՞նչ խնդրես դու, Թեմիստոկլէս. զփառս՝ հակառակ ատելութեան հանե՛լ յիս ախոյեան, այլ զայս նուագ ոչ յաղթեսցես։ Ե՛կ մատիր 'ի գիրկս իմ, (Նշանէ 'ի գահոյիցն.) և որպէս յուսացար՝ գիտ զնոյն։ Ահա զգանձս բացեալ վասն քո, և զինեսցի 'ի պաշտպանութիւն քեզ պետութիւն Արեաց, և յայսմ հետէ՝ Քսերքսէս ընդ Թեմիստոկլեայ մի անձն իցէ։

Թեմիստոկլէս. Յայժմ, զի՜ցազանց տէր, յանդուգն և տարապայման ակնկալութիւնս իմ թուէր, այլ արդ յաղթեցայ 'ի գթութենէ, խոստովանիմ զպարտութիւն։ Զի՞նչ հատուցից փոխարէն, զքրտմնս իմ և զվաստակս, զարիւն իմ և զկեանս. այլ զի՞նչ այնոքիկ իցեն առ մեծ երախտիսդ։

Քսերքսէս. Բարեկամութիւն միայն Թեմիստոկլեայ շատ է 'ի փոխարէնս. այլ կացցէ 'ի մեզ պայքար։ Զառաջին թշնամանս ահա մոռանամ, այլ չքեզ ես վաւեսցի պատերազմ այսօր ընդ իս և ընդ քեզ։ Իբրև զատելութիւնս սէր փոխանակեաց՝ և կռւոյն փոխեսցի կերպարան։ Մոռա դու զցասումն, ես զվրէժխնդրութիւն, դու իմ զօրավիգն նեցուկ ամրութեան, ես եղէց հովանի քեզ և պաշտպան. «Եղանէ»։

Թեմիստոկլէս. Ցնդյեղուկ բաղդ, զի՜րդ վաղվաղակի փոփոխիս. եթէ խաղալ զինև կարծէիր՝ զուր յուսայար. 'ի յաջողուածս և 'ի ձախողութեան ծանեայ զքեզ. 'ի հրապոյրս սիրոյդ ոչ պատրիմ, և 'ի ցասմանէդ քումէ ոչ զանգիտեմ.

Ոչ 'ի շրթանցըդ քոց ժպիտ խաբուսիկ
Ի՛ ոչ չըլլանամ 'ի քո շողիւն վաղանցիկ։
Կանաչագեղ 'ի մարգարոտ ընդ ծաղկամբ
Դարանամուտ սողան բստէպ իժք 'ի ջամբ։
Նրշոյլք յայեր վառին երբեմն իբր աստեղս,
Աւաչէն աստեղք, և է նոցա ցոլ գիւրեղծ։ (Եղանէ)։

ՏԵՍԻԼ ՀԻՆԳԵՐՈՐԴ

ԱԳԵՍԻԼԱՅՈՍ, ՄԻՀՐԱՆ

Ագեսիլայոս. Ա՛հ հայր իմ, ո՞ւր իցես, ո՞ ինձ զնա ցուցանէ, եղո՛ւկ ինձ, ոչ կարեմ գտանել զնա. սակայն աստ յանդիման եղև արքայի. եղբայրն իմ Նէոկլէս նա պատմեաց ինձ, եթէ երբեք խաբեսցի՛ նա։

Միհրան. Ագեսիլայէ՛։

Ագեսիլայոս. Ո՛հ Միհրան, ողորմեա, գթա, ապրեսջ զհայրն իմ։

Միհրան. Զհա՞յր քո։

digitised by A.R.A.R.@

Ագեսիլայոս. Այո՛ քաջդ, Թեմիստոկլեայ որդի՛ եմ, արդ ծածկել ինչ ոչ օգնէ։

Միհրան. Այժմ լուայ. այլ առ իսկ՝ իցեն քեզ ցաւքդ, զի եղև հօր քում. չև ևս ապա գիտացեր։

Ագեսիլայոս. Զայս ևեթ գիտացի՝ զի ինքն հայր իմ անձնամատն եղև ի ցասումն Փերքսեսայ։ Եղբայրն իմ՝ Նէոկլէս ասա առնմոչ կարացեալ արգելուլ զնա ի մահահիթ խորհրդոյն, եկն չտապաւ՝ գուժեաց ինձ զամենայն։

Միհրան. Եւ այլ ոչ ինչ գիտիցես։

Ագեսիլայոս. Եւ զինչ, ասէ պատմեա։

Միհրան. Ո՞ն ապա երթիցուք՝ զի կոչէ զքեզ արքայ։

Ագեսիլայոս. Այրքայ դիս կոչէ. իսկ առ ինչ, Միհրան, մի եթէ չար ինչ...

Միհրան. Ոչ այդպէս, զի որդի ես Թեմիստոկլեայ՝ ինքնին հայր քո յայտնեաց արդ յունկն արքայի, և խնդութեամբ բազմաւ լուաւ զայն Փերքսէս։

Ագեսիլայոս. Ցածեաւ ուրմն արքայ ի ցասմանէ իւրմէ առ հայրն իմ։

Միհրան. Զինչ ցասումն կամ՝ զինչ ատելութիւն. Թեմիստոկլէս արդ ընդ առաջին սիրելիս է արքայի։

Ագեսիլայոս. Եւ զիա՞րդ. ո՞չ վայրիկ մի յառաջ արեան Նորա ծարաւէր։

Միհրան. Եւ արդ դիրկս զնովաւ ածէ, զնա կարգայ իւր բազդ, և զնմանէ խօսի առ ամենեսեան։

Ագեսիլայոս. Ճշմարտութեամբ, Միհրան. ո՞հ, մի եթէ փաղաքշես զինև։

Միհրան. Ա՛յսպէս գիտիցես զՄիհրան։

Ագեսիլայոս. Ո՞հ ներեա ինձ. բազդ, խնդութիւն յեղակարծ զմիտս իմ կալաւ, այլ յայլմէ լինիմ և ոչ գիտեմ ուր իցեմ. թուխմ երազել, երկնչիմ զարթնուլ, գուցէ անդէն ի վիչտս դարձայց։ Հա՛ապա երթիցուք։

ԱՐԱՐՈՒԱԾ ԵՐՐՈՐԴ

ՏԵՍԻԼ ԱՌԱՋԻՆ

ԹԵՄԻՍՏՈԿԼԷՍ, ՆԷՈԿԼԷՍ

Թեմիստոկլէս. Ահաւասիկ, Թեմիստոկլ, այլափոխեալ՝ ի միում աւուր երեսք բաղդին։ Ահա փոխանակ դոյզն տաղաւարին, զոր սակաւիկ ինչ յառաջ մուրացիկ և անկեաց կենաց խնդրէիր, ժողովէ զքեզ արդ պալատ չքեղ. սպասք բիւրազգիք, փարթամ մեծութիւն արդ գրև վասի. հազարապետ եղեր արքայի, իշխան աշխարհիս։ Այլ ո՞ գիտէ՝ զինչ տացեն երկինք կատարած, ո՞ գիտէ՝ քանի՞ ևս ի տեսարանիդ լիցիս կերպափոխ։ Ա՜հ, և կարի յոյժ նմանագոյն՝ խաղ են կեանք մարդոյ ի վերայ երկրի, և ո՞ գիտէ երբ վախճանեսցին։

Նէոկլէս. Գէթ խուն մի արդ զուարթ նոցանէն ասասցէք, ո՛ հայր, ի սփոփումն անմեղութեան և առաքինութեան. արդ անցին զմեօք ալիք։ Ո՛րպէս ի լուր համբաւոյն՝ քաղաքացիք ապաշնորհք զարհուրեսցին յԱթէնս։ Այս մեզ, ո՛ հայր, սկիզբն է աւուրց բարութեան. այժմէն տեսանեմ և թուխմ վայելել ընդ քեզ՝ ի բարձ ի պատիւ. և գանձս և յաղթանակս և պատկս ընդ քեզ գործել հաստատարհ, նուաճել զթագաւորութիւնս, օրէնս տալ ազգաց։

Թեմիստոկլէս. Զգոյշ, Նէոկլէս, մի այդչափ խրախուսել. դեռ ևս անարի երկիւղիւն վհատեալ արդ յանդուգն խիզախես։ Մինչ դեռ ճախողակի հողմք չբնչէին հուսա առ նաւահանգիստն ահարեկեալք, արդ զի վայրիկ մի սքողէն համարձակես բնաւ զառագաստս։ Համբուն զկայանակն կամէր։ Խրախոյսդ այդ՝ արիութիւն էր յայնմամ, և արդ յանգգնութիւն, և որում սբրտարեկեալքն երկիւղ վատութիւն էր անդ, և ասա իցէ առաքինութիւն։

Նէոկլէս. Այլ զմի՞ իցէ կասկածել, ո՛ հայր։

digitised by A.R.A.R.@

Թեմիստոկլէս. Իսկ յի՞նչ յուսալ. եթէ 'ի զա՞նձս՝ որ յուսացեալ և կորնչին. թէ 'ի բարեկամս՝ որ ոչ մեր են, այլ բաղդին, ընդ նմա եկեալ և ընդ նմա մեկնին։

Նէոկլէս. Այլ սէր Քսերքսեայ՝ բաւ է 'ի զօրավիգն։

Թեմիստոկլէս. Եւ Քսերքսեայ ցասումն՝ բաւեսցէ 'ի բեկումն։

Նէոկլէս. Այլ Թագաւոր իրաւասէր և իմաստուն Քսերքսէս...

Թեմիստոկլէս. Այլ Թագաւոր մեծ իբրև զնա՝ ոչ կարէ ճշմարտութեամբ ամենայնի խելամուտ լինել. յաճախ և 'ի չարախօսաց որոգայթի, և չարախօսք երբեք ուրեք ոչ պակասին։

Նէոկլէս. Այլ դու, հայր, առաքինութեամբ քով և զամենայն չարախօսութիւն կարկեսցես։

Թեմիստոկլէս. Խարիս, Նէոկլէս. ուր իւրաքանչիւր գիւր վաստակս մեծարէ՝ անդ առաւել է վտանգաւոր առաքինութիւն բազմափայլ։

Նէոկլէս. Ո՛հ, որպիսի՛...

Թեմիստոկլէս. Ահա արքայ գայ, տեղի տուր աստի։

Նէոկլէս. Զօրութիւն ծածուկ զարանեալ կայ 'ի բանս քո, հայր. մինչդեռ 'ի ծոց բաղդին թուէր, յանկարծ յափշտակեցին զիս ալիք երկիւղի. 'ի քթթելական՝ կերպարանափոխ եղև ամենայն, և այլընդ այլոյ փոխանակեն կերպ։

Այսպէս երբեմն 'ի Թատեր — Շուրջ բազմելոցն 'ի զընին
Տեսիլք ըստէպ փոփոխին — Խարեպատիր 'ի պատկեր.
Բանտ աշաւոր և տրխուր՝ — Ցոփեհանդուն յարքունիս,
Անդունդք ծփին 'ի յալիս — Մայրեաց յանտառ Թաւամուր. (Երթայ)։

ՏԵՍԻԼ ԵՐԿՐՈՐԴ

ՔՍԵՐՔՍԷՍ, ԹԵՄԻՍՏՈԿԼԷՍ

Քսերքսէս. Թեմիստոկլէս։

Թեմիստոկլէս. Ահաւասիկ եմ, տէր։

Քսերքսէս. Ի լրումն փոխարինի քոյոց առ իս վաստակոցդ՝ բազում ինչ դեռ ևս պարտապան եմ։ Պարգևս խոստացայ զԹեմիստոկլէս առ իս ածելոյ, արդ՝ զի ընկալայ՝ գամ հատուցանել։

Թեմիստոկլէս. Եւ ո՞չ զոր մինչև ցարդ աննախանձ առատութեամբ պարգևեցեր՝ շատք իցեն։

Քսերքսէս. Առ մեծութեամբ պարգևիդ՝ որով ճոխացայ՝ և ամենայն հատուցումն նուաղ ինձ թուի։

Թեմիստոկլէս. Կամիս ապա...

Քսերքսէս. Զոյժս բաղդին կամիմ հատուցանել, և հակառակ նմին ամբառնալ դքեզ։ Ահա սկիզբն պարգևաց մերոց՝ տուեալ լիցին քեզ Լամպսակոն և Միուս, և զորով կարկաջասահ ալիքն հոսեն Մենանդրեայ։ Ապա և հաւաստիք մեծի սիրոյն Քսերքսեայ՝ ըստ արժանի քոց վաստակոցդ՝ յայտնագոյն ցուցցին։

Թեմիստոկլէս. Բաւ է, տէր արքայ. յաղթանակեցեր ցարդ 'ի վերայ Թեմիստոկլի, մի՛ 'ի սպառ զնա ամաչեցուցանես։ Զի՞նչ քեզ ցայժմ վաստակեցի։

Քսերքսէս. Զի՞նչ վաստակեցեր, բարէ, թեթև՞ թուի քեզ՝ զի 'ի մարդասիրութիւն մեր յուսացեալ՝ 'ի մեզ զկեանս քո թողեր, ապարէզ նոր բացեալ առաջի մեր՝ անմահ թողուլ փառս յազգս մահացուաց, և զի քև դարձուցեր 'ի մեզ բովանդակ զոյժս Արեաց պետութեան։

Թեմիստոկլէս. Իսկ զաշխարհաց քանդել, զարեանց ճապաղիս, զամբաւ կոտորած՝ որոց վնասապարտ եմ...

Քսերքսէս. Զամենայն փոխարինեն փառք՝ որով զԹշնամւոյն զառաքինութիւն մեծարեցի։ Առաջնոյ պարտութեանցն ամօթ՝ բաղդին էր. իսկ այս՝ մեր են փառք։

Թեմիստոկլէս. Իմաստք գիւցական՝ արժանի որ զՈրմզդի մեծի ունիս զգահ 'ի յերկրի. երանեմ զաշխարհն՝ ուր այդպիսիդ թագաւորես։

Քսերքսէս. Լուր ինձ արդ, իմ 'ի մտի եդեալ է զսկսեալն մարտ յառաջ մղել. արդ զի զկեանս քո յուսացար 'ի մեզ, և մեր թագաւորութիւնս 'ի քաջութիւն

digitised by A.R.A.R.@

բազկի քո ամրացի։ Արեաց բանակին զու կացցես սպարապետ և իշխան. յանդիման մեծի ճակատուն՝ համախումբ փաղանգացն՝ այսօր իսկ զիշխանութեանդ զչուք և զձև կալցիս. և զխրախուսացեալն Եգիպտոս նըւաճեալ նախ՝ ժամ տացուք և 'ի մեծամեծսն ձեռնարկել։ Ցորչափ Թեմիստոկլ առ մեզ է՝ զաշխարհ նուաճեմք։

Թեմիստոկլէս. Եթէ յայս վայր, տէր արքայ . . .

Քսերքսէս. Ե՛րթ աստ, 'ի հանդէս նորոց յաղթութեանց պատրաստեսջիր, և զոր բանիւք կամէիր ասել՝ արդեամբք հաւաստեսցես։

Թեմիստոկլէս. Բարերար դիք, հովանացի աջ ձեր արքային Արեաց. յամերամ կենօք պահեսջիք զսա յազգս մնացուաց, պատկեր կենդանի դրոշմեալ յերկրի ձեր ուղղութեանց. և բազմադէմ առ 'ի նմանէ բարեացն փոխան՝ սիրտ երախտագէտ տուք ինձ՝ 'ի յաղթել և կամ մեռանել 'ի վերայ նորա։

Բարբառ փողոցըն մարտամբոխ՝ — Ազդէ խրախոյս յունկն իմ այժմէն,
Հրափայլ ուղխից արեանցն 'ի լող — Ի վերայ քո վառեալ 'ի զէն։
Սուր և դժոխս՝ եթէ սպառնան — Բաղդին արկածք չեն ահաւոր,
Եթէ բարեաց առ իս փոխան — Ով Քսերքսէս, չեմ ապաշնորհ.

« Ելանէ »։

ՏԵՍԻԼ ԵՐՐՈՐԴ

ՔՍԵՐՔՍԷՍ, ՄԻՀՐԱՆ

Քսերքսէս. Եւ կարի իսկ քաջ ծանր է և դժուարակիր արքունին խոյր, և հոգք բազմաթախանձք զարանեալ ընդ նովաւ. սակայն և որո՞ց բերկրութեանց չիցէ այն օճան։ Զատուքինին պսակել, 'ի բռնութենէ կոյր բաղդին թափել զանմեղն, և զարժանին՝ յերանաւէտ կեանս հանել 'ի թշուառութենէ՝ սփոփումն է անպատում և բերկրապատար, և զթագաւորս աստուածատիպ՝ ըստ ներել մահկանացու բնութեան՝ գործէ։ Եւ ինձ այս բաղդ պատահեաց յօրէ՝ յորմէ Թեմիստոկլէս առ իս է։ Այլ պարտ է զանկշռելի զանձն ամրացուցանել, և խորագոյն զսէրն՝ խնամեկան յօդիւ հաստատել 'ի մէջ մեր, և փեսայացի ինձ Ազեսիլայոս։ Առաքինութիւն և հանճար և իմաստութիւն ոչ չափաւորապէս նշողեն 'ի պատանին, և ծննդեամբն ևս ոչ անճահս խառնեսցի յարքունիս զարմ։ Անդստին յառաջին օրէ զութ և սէր անկաւ ինձ ընդ նմա, այլ ոչ գիտէի եթէ դիւցազին որդի իցէ նա։ Եւ Թեմիստոկլէս անխզելի յօդիւն ընդ մեզ՝ 'ի վերայ փառաց իւրոյ տոհմին տացէ զպատերազմն աշխարհիս Արեաց։ Այլ կամէի գիտել զխորհուրդս Ազեսիլեայ. առաքեցի զնմանէ, այլ . . .

Միհրան. Տէր արքայ։

Քսերքսէս. Զի՞նչ իրք իցեն։

Միհրան. Միւսանգամ հնդկէն պատգամաւորն խնդրէ յանդիման լինել արքայի։

Քսերքսէս. Դեռ ևս աստ իցէ, և ընդէ՞ր յապաղեաց ցայս վայր։

Միհրան. Գիտացեալ զի 'ի քաղաքի աստ է Թեմիստոկլէս, ակն ունի մեծամեծ պարգևօք առնուլ զնա։

Քսերքսէս. Է՜հ, անցոյց զանցոյց զերկայնմտութեամբ մերով։ Ե՛րթ պատուէր տուր 'ի մէնջ փութալ մեկնել յաշխարհէս, ո՛չ ևս լուիցուք նմա։

Միհրան. Կացցէ հրաման արքայի։

Քսերքսէս. Այլ կա՛ց. խորհուրդ լաւագոյն 'ի միտս իմ անկաւ. այլազգ պատուհասեսցուք զնա։ Ե՛րթ պատուէր տուր զի եկեսցէ այսր. երդուեալ 'ի Միհրն աստուած՝ եթէ ոչ այսօր իսկ ընդ հուպ՝ հրապարակաւ 'ի տեսիլ ամենեցուն զԹեմիստոկլէս առաքեցից յԵլլադա. փութա մի՛ յապաղեր. ճեպեցո զնա այսր. ես այդ նմա մնամ. « Ելանէ »։ Խաղ արարից զնովաւ, ուստին և Հելլէնք ընդ ուժ 'ի վեր զան։

digitised by A.R.A.R.@

ԱՐԱՐՈՒԱԾ ՁՈՐՐՈՐԴ

ՏԵՍԻԼ ԱՌԱՋԻՆ

ՔՍԵՐՔՍԷՍ, ՄԻՀՐԱՆ, ՆԱԽԱՐԱՐՔ, ԱՊԱ ԹԵՄԻՍՏՈԿԼԷՍ ԵՒ ԼԻՍԻՄԱՔՈՍ

Քսերքսէս. Այդպէս ապա, Միհրան, ի խաբս է Լիսիմաքոս։

Միհրան. Աներկմիտ առանց յերկուանալոյ, ընկալեալ զպատգամ արքայի՝ ակն ունի ընդ հուպ զԹեմիստոկլէս ընդունել։ Այլ ահաւասիկ նա ինքն և Թեմիստոկլէս ընդ նմա։

Քսերքսէս. Ահէք ինձ սյսր գնչան սպարապետութեան Արեաց։ «Երրայ բացմի ի գահ. Միհրան ածեալ սկսեցար զգաւազան սպարապետութեան՝ կայ առ արքայի՝ յանմ վայրի»։

Լիսիմաքոս. Բարեկամ քաջ, յոր ազէտս պահեցին զիս երկինք. եթէ տեսանէիր զսիրտ իմ, զոր ամօթ . . . ։

Թեմիստոկլէս. Զհաւատարիմ քաղաքացւոյ վճարեալ զպարտս՝ առ ինչ ամաչիցես. ընդ քաղաքացի և ընդ բարեկամ՝ բազում է խտիր։ Հայրենիքն աստուած են՝ որում օրէն է զոհել զամենայն։ Եթէ և Թեմիստոկլէս արդ Լիսիմաքոս էր՝ ոչ այլ ինչ ապդ գործէր։

Քսերքսէս. Ե՛կ, յառաջ մատիր Թեմիստոկլէս, ահաւասիկ Արեաց պետութեան ընտրեալ համախումբ, այլ մեծի ամբոխին առաջնորդ պակասէ. և ո՞ քան զԹեմիստոկլէս իցէ արժանի։ Ա՛ռ զգաւազան սպարապետի զորացն Արեաց. զքեզ կացուցի իշխան ընդ իմ և առաջնորդ նոցա, պատժել և պըսակել, պատերազմել և կանգնել յաղթանակ. փառք Քսերքսեայ և աշխարհիս բազդ՝ ի քեզ է։

Թեմիստոկլէս. Զչուք մեծի պաշտաման՝ զոր շնորհէ արքայ, ի ներող զԹութիւն նորա յուսացեալ՝ առնուցու յանձն Թեմիստոկլէս ունել զայն անդրժելի ուխտիւ հաւատարմութեան։ Եւ զինուորեսցեն երկինք համագունդ ընդ մեզ ընդ դրօշակաւ քով կրազդ. և եթէ աստեղք եղեռնաւորք ազդեցութիւնս չարեաց՝ պետութեանդ սպառանն՝ ահաւասիկ ես, յիմ գլուխս թափեսցի ցասումն երկնաւոր, և Արեացդ դունդք աննկունք ի մարտէն՝ յաղթանակաւ դարձեալ բոլորիւք գայնեսք, դիակն անչունչ ածցեն զիս առ քեզ։

Լիսիմաքոս. Այսպէս կատարէ զխոստումն իւր Քսերքսէս։

Քսերքսէս. Այո՛, զԹեմիստոկլէս առաքել խոստացայ ի Ցոյնս, կատարեցից. և ո՛րպէս՝ լուր. «Ա՛ռ Թեմիստոկլէս»։ Կամիմ ո՛վ քաջ, ի ժպիրէն Եղլադա լուծանել վրէժ. զչոնիդն եգիպտական՝ իցեն և այլք՝ որք նուաճեսցեն. զքեզ, սպարապետ քաջայաղթ, վրիժագործ մեծի ցասման իմոյ արձակեմ՝ ի Ցունաստան։ Երթ, հուր և սուր՝ ի ձեռին, հար, կիզեա, տապալեա. և մի՛ խնայեր։ Սպարտա, Թեբէ, Կորնթոս, Աթէնք, զԱրեաց զորութեան ամենեքին ածցեն զփորձ։

Թեմիստոկլէս. «Վա՛յ ինձ, արդ վասն իմ վճարեալ է»։

Լիսիմաքոս. Եթէ ի լուր կոչեցեր զիս . . .

Քսերքսէս. Զաղէտս ազգիդ կոչեցի լսել, արդ շատ է. ել մեկնեաց ատի, գուժկան զքեզ առ համազգիսդ սպառանալեաց իմոց առաքեմ. երթ, պատմեա նոցա որպէս և զիմրդ հալածականն դառնալ առ նոսա։

Լիսիմաքոս. Հէգ և տառապեալ հայրենիք. «Եյահէ»։

digitised by A.R.A.R.@

ՏԵՍԻԼ ԵՐԿՐՈՐԴ

Թեմիստոկլէս, Քսերքսէս, Միհրան

Թեմիստոկլէս. «Ե՛ս հայրենեաց մատնիչ»։

Քսերքսէս. Զի՞նչ խորհիս Թեմիստոկլէս։

Թեմիստոկլէս. Ո՛հ տէր արքայ, սիրտ իմ և կեանք և արիւն՝ քո է ամենայն, հրամայեա զոր կամիս, այլ զայդ հրաման անցո յինէն։ Եթէ աշխարհակալութեան ցանկայ Քսերքսէս՝ բազում են աշխարհք 'ի նուաճել։

Քսերքսէս. Այլ չև գիրգոխտն Ելլադա նկուն արարեալ, եթէ և զտիեզերս նուաճեմ՝ ոչ ինչ է։

Թեմիստոկլէս. Այլ յուշ լիցի քեզ...

Քսերքսէս. Ո՛չ այդպէս, իմ զայդ անդարձութեամբ եդեալ է 'ի մտի, և որ ժպրհին հակառակել՝ թշնամի իմ է։

Թեմիստոկլէս. Զայլ ոք ապա ընտրեսցէ արքայ իւր սպարապետ։

Քսերքսէս. Զիարդ։

Թեմիստոկլէս. Ահաւասիկ գաւազան սպարապետութեան Արեաց. «Ի բաց դնէ առ ոտս Քսերքսեայ. Միհրան բարձեալ՝ դնէ անդրէն 'ի սեղան»։

Քսերքսէս. Իսկ ընդէ՞ր։

Թեմիստոկլէս. Եւ ստիպիցէ՞ արքայ զծառայ իւր՝ մատնիչ և դաւաճան լինել բնիկ աշխարհին. ո՛հ, քա՛ւ այդ, չև այդչափ բռնացան յիս չարիք։

Միհրան. Բարէ համարձակութեանն։

Քսերքսէս. Այլ ոչ ևս Աթէնք հայրենիք են քեզ, կենաց անձինդ դարանակալ. այլ արքունիքս այս՝ որ յաղէտս քո կեցոյցն զքեզ և կրէ։

Թեմիստոկլէս. Թող որ կամին կեցուցէ, այլ Թեմիստոկլէս յԱթէնս ծնաւ, և հայրենի գաւառին սէր՝ ընդածին է. և գազանք զխշտիս ծննդեան սիրեն։

Քսերքսէս. Արտմութիւն փառի յիս։ Սիրես դու ապա տակաւին զԱթէնս. այլ զի՞նչ 'ի նմա սիրելի է քեզ։

Թեմիստոկլէս. Ամենայն ինչ. աճիւն նախնեաց իմոց, օրէնք սուրբք, դէք խնամակալք, բարբառ, բարոյք և սովորոյթք, վաստակք՝ զոր վաստակեցի նմա, փառք՝ զոր 'ի նմանէ ընկալայ, և համայն՝ օդ և երկիր և պատուարք և ժայռք և կոթողք և ամենայն ինչ։

Քսերքսէս. «Իջանէ 'ի գահոյից» Ա՛յ անարժան ապերախտ, և պանծաս իսկ 'ի սէր թշնամեաց իմոց աստ առաջի իմ։

Թեմիստոկլէս. Ես, դիւցազնդ...

Քսերքսէս. Դու ապա թշնամի իմ ես տակաւին. զուր ապա յուսացայ՝ առատաձիր պարգևօք...

Թեմիստոկլէս. Զպարգևս քո, արքայ, ես ոչ մոռանամ. գրչաւ երկաթեաւ անջնջելի դրոշմեալ են 'ի սրտի իմում. այլ թէ երախտագէտ հաւատարմութեան փորձ խնդրէ արքայ, ա՛յլ թշնամիս ցուցցէ, և ահա արիւն իմ և կեանք. այլ քա՛ւ լիցի ինձ 'ի կորուստ հայրենեաց զէն առնուլ. Քսերքսէս յայդ զուր յուսացաւ։

Քսերքսէս. Տակաւին ժուժկալեցի՛մ. լո՛ւր արդ, Թեմիստոկլէս, արդ արքայ խօսի։ Որ զՔսերքսէս իւր բարեկամ խնդրէ՝ պաշտպանել Աթենայ ոչ կարէ։ Տես արդ, ընտրեա՛ զոր կամիս։

Թեմիստոկլէս. Գիտէ արքայ զոր ընտրեցին։

Քսերքսէս. Ո՛չ այդպէս, տես քաջ զի զբաղդ քո սահմանես։

Թեմիստոկլէս. Քաջ իսկ տեսի։

Քսերքսէս. Զերկնչի՞ս 'ի ցասմանէ՝ որ 'ի թշուառութիւն կարող է ածել զքեզ։

Թեմիստոկլէս. Այլ ոչ 'ի վատութիւն՝ նենգել հայրենեաց։

Քսերքսէս. Այլ գիտիցե՛ս՝ զի ես զկեանս քո պարգևեցի։

Թեմիստոկլէս. Այլ ոչ զփառս։

Քսերքսէս. Բայց ահա ատեայ զքեզ Ելլադա։

Թեմիստոկլէս. Այլ ես սիրեմ զնա։

digitised by A.R.A.R.@

Քաղրքաս. Ո՞վ սրտմտութիւն. զայս դու, Թեմիստոկլէս, հատուցանես բարեբարիդ։

Թեմիստոկլէս. Ա՛ՔԵՆայ եմ քաղաքացի, արքայ։

Քաղրքաս. Արդ ոչ ունիմ ծոյժ. հանէք քարշեցէք յաչաց իմոց զանարժանդ ապաշնորհ. տուք զդա ի պատուհան՝ թերևս երկիւղիւ չարեսցն՝ սասանեսցի յապառաւում խստութենէն։

Թեմիստոկլէս. Ուր չեն մեզ՝ և երկիւղ ոչ է. ի գեղարանս կամ ի չղթայս զզուարթութիւն երեսաց ոչ փոխեմ. մեռուցեալ իմ չիք, ի պատուհասից ընդէր զանգիտեմ։ Բայց թէ հաւատարմութիւն ի մեզս գրեսցի՝ մեռուցեալ և մահապարտ եմ, մեռայց մտադիր, այլ ո՛ մահ նախանձելի՝ որ այնմ յանցանաց տացի փոխարէն. «Երևանի»։

ՏԵՍԻԼ ԵՐՐՈՐԴ

ՔՍԵՐՔՍԷՍ, ՄԻՀՐԱՆ, ԱԳԱ ԵՒ ԱԳԵՍԻՊՅՈՍ

Միհրան. Ոչ, ոչ կարծէի, տէր արքայ...

Քաղրքաս. Ո՞հ Միհրան, և ո՞ կասկածէր թէ յարքունիս աստ՝ լու՝ իլու ամենայն հրապարակիս՝ յամօթ արասցէ զիս Թեմիստոկլէս. ի սէր ատելեաց իմոց պարծեսցի առաջի իմ, ապախտ արարեալ զմեծամեծ պարգևս և զսէր։

Միհրան. Այլ ո՞ գիտէ՝ թերևս ի սպառնալեաց արքայի և յերեսաց վտանգին՝ մեղմեսցի՝ ի կամակոր յամառութենէն։

Քաղրքաս. Ո՜ տայր. այլ ես այդմ ոչ ակն ունիմ. յամառութիւն՝ վառք են առաջի նորա։

Միհրան. Այլ զոնեա որդիք նորա՝ ի գորով ածեալ զդաստացուսցեն զնա. զէթ Ագեսիլայոս մտերմութեամբն ընդ քեզ։

Քաղրքաս. Թող անդր՝ ի բաց զԱգեսիլայոս. արդ և՝ ի նա թերահաւատիմ. Թեմիստոկլեայ որդի է Ագեսիլայոս, և ցուսաց ամենեցուն՝ ատելի Քաղրքասէ։

Միհրան. Այլ ահաւասիկ նա ինքն գիտեալ գայ այսր խուճապաւ։

Ագեսիլայոս. Խնայեա, տէր արքայ, գթութիւն։

Քաղրքաս. Եւ իշխես դու քեզ երևել առաջի իմ, ապաշնորհ հօր՝ զանակ կոխտեեան։

Ագեսիլայոս. Եթէ ոչ ներող գթութիւն Քաղրքասայ համարձակէր ինձ՝ զիարդ իշխէի։ Այլ արդ եթէ յանցեալ ինչ կամ թէ վրէ՞ալ յակնկալութենէս լինիցիմ. ո՜հ, ոչ. ահաւասիկ յոտս քո մատուցեալ պատրաստիմ արտասուօք, խնայեա, տէր, յաղեաս իմ, անկցի դուք իմ առաջի քո. կամ թէ այնպէս ինչ հաճոյ իցէ քեզ, և արեամբ միայն Ագեսիլեայ յագեսցի սրտմտութիւն քո՝ ահաւասիկ եմ. կենաք իմ ընդ կենաց հօր իմոյ, հար զիս և մի՛ խնայեր, բայց միայն զհայր իմ ապրեցո։

Քաղրքաս. «Սիրտ իմ մորմոքի, բա՛ռէ հայրասէր սրտին»։ Մնոցի որ մեզաւն, յարիւն անպարտ ոչ ձեռն մխեմ, այլ զայր ապաշնորհ և ոխերիմ թշնամեացս սիրող՝ զիարդ ապրեցուցից. Է՛հ, այդմ մի՛ ակն ունիցիս։

Ագեսիլայոս. Բարձաւ ապա ակնկալութիւն, եղուկ ինձ. այ հէգ և տառապեալ ծնող, արդ զի՞նչ արարից... Ցիս տէր, զայս զէթ շնորհեսցես ինձ. յապաղեսցէ վայրկեա մի սրտմտութիւն քո. ժամ տուր ինձ, թերևս կարացից փոխել զնա՝ ի խորհրդոցն։ Աղէ՛, եթէ և զայս զլացցիս, տարարադ ապա ծնաւ Ագեսիլայոս. ի Քաղրքասայ դեռ ոչ աք գարձաւ չողորմեալ, ես արդ առաջին զփորձ առից զանգթութեան նորա. ո՜հ, ոչ. քաւ այդ յարքայէ. սէր և գթութիւն ընտանի են նմա, և ոչ յաղթէ նմա ցասումն։ Ա՜խ, տէր արքայ, զիշէք սրտմտութիւն քո, խնայեա՝ ի հայրն իմ, կամ աստ իսկ սպան զիս։

Քաղրքաս. Ա՛յրի կաց. «Ճանիցայց զսիրտ իմ»։ Ա՜հա լուայ, և տացի քեզ ժամանակ. երթ զգաստացո թէ կարես՝ զհայր քո, մի՛ անշնորհ առ բարերարն երևել և զամենայն մուռացայց։ Շատ է զոր շնորհեցին ցարդ, և զայս դարձեալ շնորհեցից նմա. բաղդ իւր՝ ի ձեռին իւրում, ընտրեսցէ զոր կամին. այլ տեսցէ մեծի գթութեանս արժանի յարգարել զանձն. ապա թէ ոչ՝ յապաշնչոյ ցասմանս իմոյ՝ տոկոսեօք լուծցի վրէժ. «Երևանի շնոր Միհրանայ»։

digitised by A.R.A.R.@

Ագնիդայոս. Արդ սակաւ մի ոգի առնուցուս, արդ առկայծէ յուսոյ նշոյլ, ո՛գիտէ՝ թե-
բևս յայլեաս մեր 'ի գուբ խանդաղատանալ՝ խոնարհեսցի հայրն 'ի կամս
մեր... սակայն յանմեղկելի պնդութենէն խիթամ կասկածեմ. երկի՛նք 'ի
ձեզ եմ ապաստան, խնայեցէք յիս, զերծայց յարհաւրաց աստի։

ԱՐԱՐՈՒԱԾ ՀԻՆԳԵՐՈՐԴ

ՏԵՍԻԼ ԱՌԱՋԻՆ

ԹԵՄԻՍՏՈԿԼԷՍ ՅԱՐԳԵԼԱՆՍ, ԱՅԱ ՄԻՀՐԱՆ

Թեմիստոկլէս. Քաղաք իմ, հայրենիք իմ, անողորմ պատահեցարուք ինձ։ Մտադիր
ցայժմ 'ի վերայ ձեր նահատակէի զարիւն իմ և զկեանս փոխանակեալ։
Մանչելոյ սրտմտութեանդ՝ քաջութեամբ սրտիս տարայ, և նմդեմ տեղի
'ի տեղւոջէ հալածական գնացի. այլ արդ ապաշնորհ վասն ձեր առ բարե-
բարն երևել և առ մարդասէր թագաւորն, որ փոխարէն թշնամանաց՝ ներ-
ող գթութեամբ գրկեաց զիս, բարձիւ և իշխանութեամբ պատուեաց,
ո՜հ, ներեցէք՝ չեմ այդմ բաւական։

Միհրան. Առ քեզ գամ, Թեմիստոկլէս. հրաման է ինձ 'ի Քսերքսեայ՝ գիտել զխոր-
հուրդս քո։ Նա մարդասէր կամօք ցանկայ ապաշաւել ստրջանալ քեզ ընդ
վրիպակ քո. 'ի Թեմիստոկլեայ ոչ կասկածէի, ասէ, այդմ ապաշնորհ վա-
տութեան։

Թեմիստոկլէս. Քաւ լիցի, չեմ ապաշնորհ, վկայեն ինձ դիք սրտագէտք. ո՜ տայր և
Քսերքսեայ տեսանել այսօր և գիտել զսիրտ իմ։ Այլ ազէ դու քաջդ,
տար զիս, առ նա երթիցուք։

Միհրան. Ո՛չ այնպէս, մինչև յանձն առեալ ատելութիւն անմահ երդնուլ Եւրադայ
'ի բանտին, մի ակն կալցիս յանդիման լինել արքայի։

Թեմիստոկլէս. Եւ այլ ազգ չիցէ՞ տեսանել միւսանգամ զարքերարն իմ։

Միհրան. Է՛ հնար, յանձն առեալ զերդումին. իսկ եթէ ոչ զարհուրիմ, Թեմիստոկլ,
ընդ բարդ քո. գիտես որպէս անողորմելի է յիրիս այսմիկ Քսերքսէս։

Թեմիստոկլէս. Եւ լինիցիմ մատնիչ և դահիճ հայրենեաց և զապաշնորհ վատութեանն
նախատինս յանձին կալայց. և ոչ կարեմ հրապարակացոյց առնել զար-
դարութիւն իմ, և 'ի վերայ երախտագիտութեան մեռանել. «Խորհի»։

Միհրան. Սա՞ ինչ, տուր պատասխանի։

Թեմիստոկլէս. «Արիութեամբ» Է՞հ, թօթափեսցուք յանձնէ զտաղնապ, և քաջութեամբ
արժանի Թեմիստոկլեայ նահատակեսցուք։ Ե՛րթ Միհրան, տուր զրոց,
պատրաստեսցին սպասք ուխտիցն, բաժակ և սեղան և ամենայն ինչ, ըն-
տրեցի զզալ։

Միհրան. Արդ խնդութեամբ երթամ առ Քսերքսէս։

Թեմիստոկլէս. Լուր ինձ քաջդ, եթէ մեկնեցաւ Լիսիմաք 'ի քաղաքէս։

Միհրան. Արդ իսկ հանդերձի 'ի չու։

Թեմիստոկլէս. Հանդիստեսս մեծի նահատակութեանս իմոյ կամէի և դնա. փութա Մի-
հրան, եթէ մարթ ինչ իցէ՝ մաղթեսիլիր ինձ զշնորհս զայս յարքայէ։

Միհրան. Ցիմ վերայ քաջդ, մի ինչ հոգայցես. արդ իշխէ Քսերքսի Թեմիստոկլ։

ՏԵՍԻԼ ԵՐԿՐՈՐԴ

ԹԵՄԻՍՏՈԿԼԷՍ, ՆԷՈԿԼԷՍ, ԱԳԵՍԻԼԱՈՍ

Թեմիստոկլէս. Որպէս ջահ առկայծեալ՝ ուժգին ճաճանչէ զվերջին նշոյլ պայծառագոյն
այսօր փայլեսցուք։ Պահապանդ, մուժէք ինձ այսր զնեկոկլէս և զԱգե-
սիլայոս։ Եւ բնաւ իսկ զինչ է մահ, եթէ բարի ինչ փութացուք մեռա-
նել, եթէ չար՝ զէր 'ի տապնապող երկիւղէն զերծանել։ Որ քան զմահ

digitised by A.R.A.R.@

արհամարհէ զփառս՝ ոչ է կենաց արժանի։ Ամենեցուն որ զակն 'ի լոյս բանայցեն՝ հասարակաց են կեանք, այլ փառք՝ դիւցազանց միայն։ Որ վատութեամբ և անշուք որպէս ծնեալն մեռանի, և զամենայն ընդ իւր ածէ 'ի շիրիմ, յիրաւի ահարկու է մահ. որ 'ի շունչ վախճանին առանց ամօթոյ զկեանս յիշէ՝ մեռցի խնդութեամբ։

Նեոկլէս. } Սիրելի հայր։
Ագեսիլայոս. } Հայր իմ սիրելի։
Նեոկլէս. Եթէ ճշմարիտ իցէ՝ զի կեալ երախտագէտ առ Քսերքսէս ընտրեցեր։
Ագեսիլայոս. Եւ զթացա՞ր ճշմարտիւ 'ի մեզ և յանձն քո։
Թեմիստոկլէս. Լռե՛ա լերուք, անսացէք ինձ։ Գիտէք ապաքէն ո՛րպէս բուռն և անլուծանելի են հրամանք հօր։
Նեոկլէս. Իբրև զուխտ սուրբ։
Ագեսիլայոս. Եւ օրէնք անհրաժարելի։
Թեմիստոկլէս. Լուարուք ապա զիմ հրաման։ Մի՛ ոք գիտասցէ՝ զոր ինչ արդ ասացից ձեզ, մի՛ ոք լուիցէ՝ մինչև խորհուրդն լցցի։
Նեոկլէս. Լիցի այդպէս։
Ագեսիլայոս. Երդնում և ես։
Թեմիստոկլէս. Արդ բազմեցարո՛ւք, մեծի արիութեանդ հանդէս է այսօր։
Նեոկլէս. «Սիրտ իմ բաբախէ» (Նստի)։
Ագեսիլայոս. «Դողան ոսկերք իմ» (Նստի)։
Թեմիստոկլէս. Զայս վերջին նուագ խօսիմ ընդ ձեզ, որդեակք իմ. կեցի ցարդ փառօք, և արդ վտանգ է ինձ 'ի կենաց, և բազմամիտ երկոց կորիցեն արգասիք՝ եթէ ոչ մեռայց։
Նեոկլէս. Եւ ո՞րպէս։
Ագեսիլայոս. Զի՞նչ խօսիս, հայր։
Թեմիստոկլէս. Քսերքսէս՝ բարերար է, Ելլադա՝ գաւառ հայրենի. սմա հաւատարմութիւն, նմա երախտագիտութիւն օրէնք են, և ոչ 'ի միջէն հրաժարել կարեմ. և թէ զմին եղծանեմ՝ բարերարին ապաշնորհ և կամ մատնիչ հայրենեաց հարկ է ինձ լինել։ Յերկաքանչիւր չարէն փրկեսցէ զիս մահ. և է դեղ մահու մօտ առ իս...
Նեոկլէս. Եւ ո՞չ, հայր, առ Քսերքսէս խոստացար երթալ։
Թեմիստոկլէս. Յանդիման նորա զմեծ գործն կատարեցից։
Ագեսիլայոս. Այլ Միհրան՝ յերդումն ասէր երթալ քեզ։
Թեմիստոկլէս. Խաբեցաւ Միհրան, գիտեմ ես, և բարի են ինձ խաբքն. լուիցէ ինձ յուսով Քսերքսէս, և գործոյս մեծի՝ Արեաց պետութիւնն կացցէ 'ի գնին, և ականատես աշխարհ ամենայն՝ վկայ լիցի՝ զի երախտագէտ լեալ առ արքայն, և առ հայրենիս ոչ լինիմ մատնիչ։
Նեոկլէս. Եղո՛ւկ ինձ։ } (Լան)
Ագեսիլայոս. Վա՜յ ինձ։ }
Թեմիստոկլէս. Մի՛, որդեակք իմ, մի՛ անարի վատութիւնդ այդ. ծածկեցէք զոնեա յաչաց իմոց զամօթապարտ զցաւսդ, մի՛ ամաչեցուցանէք այսօր զհայր ձեր։ Արտասուել պարտ էր՝ եթէ ոչ յանձն առնուի մեռանել։
Ագեսիլայոս. Սակայն եթէ գնաս դու 'ի մէնջ, և զի՞նչ լինիցի մեզ, հայր։
Նեոկլէս. Եւ որք մնայցեմք, և զո՞ թողուցուս մեզ 'ի հայր։
Թեմիստոկլէս. Զսէր առաքինութեան, զանանց փառաց, զխնամակալութիւն դից և զիմ օրինակ։
Ագեսիլայոս. Ո՜հ հայր։
Նեոկլէս. Եղո՜ւկ մեզ։
Թեմիստոկլէս. Լուարուք ինձ արդ։ Յերկիր օտար և անծանօթ՝ 'ի մէջ թշնամեաց թաղում զձեզ կարօտ կարևորացն և թերակիրթ 'ի փորձ յեղյեղուկ բախտին, և գիտեմ զի վիշտք բազումք մնան ձեզ, այլ որդիք իմ էք, յիշեցէք զայս, և այն շատ է։ Քաջութիւն արժանի զարմից ցուցէք, և փառաց և հայրենեաց և 'ի գործ պաշտամանց՝ յոր դիք կոչեսցեն՝ խնամ ունիցիք։ Եղեան բախտին՝ աղարտել զփառս ոչ կարէ։ Ոգիք դիւցազանց՝ թէպէտ զգահոյս և թէ զանմարդի մայրիս անտառաց՝ չքնաղ առաքինութեանցն գործեն ասպարէզ։ Մի՛ 'ի սպառնալեաց ոսկերիմ բախտին վատասրտիցէք.

digitised by A.R.A.R.@

ծանուցք 'ի վշտաց՝ փութով վախճանին, փոքունցն յաղթել՝ չէ ինչ դժուարին, փառք ձեզ առաջնորդ և մի վարձք լիցին, և քան զպատիժ՝ յանցանք ահագին։ Իսկ եթէ հարկ զձեզ բռնի մղեսցէ 'ի գործ դժպատեհ՝ ուսայք 'ի հօրէդ փախստեան զուղին. (Ցառնեն)։

Նէոկլէս. Եւ զիմարդ թողուցուս զմեզ, հայր. (Ցառնեն)։

Ագեսիլայոս. Ո՜հ, սիրելի հայր, ոչ ևս տեսանիցեմ զքեզ. (Ցառնեն)։

Թեմիստոկլէս. Բաւ է արդ, որդեակք իմ, հրաժարական ողջոյնս վերջին։ Դժուարին և բազմավտանգ է ժամս՝ գուցէ մեզկեսցի արութիւնս մեր. եմ և ես հայր որդեգորով, և սիրտ իմ... Ողջամբ կացջիք որդեակք իմ. (Ողջագուրէ)։ Լռեցէք յարտասուացդ, մի յամօթ առնէք զհայր ձեր. առաւելագունի արութեան ակն ունէի 'ի ձէնջ, միթէ 'ի զուր ինչ յուսացայ. Նէոկլէս... Ագեսիլայէ... քաջ լերուք, ոչ երթամ 'ի մեռանել. Թեմիստոկլ 'ի մահ ոչ երթայ. հոկասուկ բախտին և աստուծոյ՝ գնամ կանգնել յաղթանակ, զորհաս վախճանին դափնեօք պսակել և զբազմավիշտ քրտանց իմոց ժողովել զարգասիս. (Ելանէ)։

ՏԵՍԻԼ ԵՐՐՈՐԴ

Նէոկլէս, Ագեսիլայոս

Ագեսիլայոս. Նէոկլէս։

Նէոկլէս. Ագեսիլայէ։

Ագեսիլայոս. Ո՛ւր արդեօք իցեմք։

Նէոկլէս. Որ չանթ եհար զմեզ։

Ագեսիլայոս. Եղո՛ւկ մնք, արդ դի՞ զործիցեմք։

Նէոկլէս. Դիւցազին հօր մերում լիցուք որդիք արժանի։ Հապա, եղբայր իմ, երթիցուք պնդակազմ սրտիւ՝ կալ 'ի դնին մեծի յաղթանակին, և արութեամբս մերով մեզմէ նմա զմահ։

Ագեսիլայոս. Հապա երթիցուք, զհետ քո ընթացայց... այլ, բարէ, ոչ զօրեմ, ծունկք իմ կթոտին. (Նստի)։

Նէոկլէս. Մի՛ այդպէս, եղբայր իմ, մի՛ այդպէս 'ի վատութիւն հատանիցիս։

Ագեսիլայոս. Այլ քո, եղբայր, դիմարդ ժուժկալէ սիրտ յայն ողորմ տեսիլ։

Նէոկլէս. Եթէ սատանեսցի՝ օրինակաւ հօրս ալնդեցայց.

Ահեղ նըշոյլ որ ճաճանչէ
Զայն հայրենի եթէ կարդայ
Հօրն 'ի մահուն կապոյտ երես,
Շաշատակել ինձ յսպարէս,
Խրախոյս 'ի սիրտ իմ վառեսցէ
Զիմարդ իշխեմ հետեւել նմա...
Ցառաքինին մարզեալ հանդէս։
Ելանամ՝ ահա մահուն 'ի տես։

ՏԵՍԻԼ ՉՈՐՐՈՐԴ

Ագեսիլայոս

Ագեսիլայոս. Եւ ընդէ՞ր արիագոյն քան զիս եղբայրն իմ իցէ. ոչ նոյն արիւն յերակունս մեր խաղայ, ոչ և Ագեսիլայոս Թեմիստոկլեայ որդի է. փութացուք (յառնէ) ապա զվերջին սպաս հայրասէր դորովոյ հարկանել նմա. 'ի վերոյ բազկացս այսոցիկ անշնչասցի հայրն, և որբք 'ի նմանէ զվերջին համբոյր ցրտահար ձեռացն մատուցուք, և մատուցք մեր փակեսցեն զարտեւանունս նորա՝ իրրև քուն յաւերժական իջեալ մածանի ընդքաջ... Ողջո՛ւմ տեսիլ, քաջամիտն ոսկերք իմ, բուռն առնեմ և ոչ զօրեմ ընթանալ. դրդէ ամօթ, ընկրկեն արշաւիրք. մտրակ և սանձ տագնապեն զիս. արտասուեմ, դանդաղիմ, և հայրն իմ մեկնի յիրէն տարագնայ։

Ոսոխք կրկին յիս հակառակ,
Եթէ հաճոյ է ձեզ, ո՛վ դիք,
Փառք և երկիւղ կրեսուին ահա,
Առէք զոգիս իմ 'ի մարմնոյ,
Զիմարդ զօրեմ ես միայնակ
Շատ է, եղէ ցարդ խաղալիկ
Յաղթանակել ընդդէմ նոցա։
Անկարեկիր ցասման ձերոյ։

digitised by A.R.A.R.@

ՏԵՍԻԼ ՀԻՆԳԵՐՈՐԴ

Ի վերանալ միջին ծածկատուն երևի սեղան ուխտիցն պատրաստեալ, և 'ի վերայ սպասք։

ՔՍԵՐՔՍԷՍ, ՄԻՀՐԱՆ, ԼԻՍԻՄԱՔՈՍ

Քսերքսէս. Եկեսցէ Թեմիստոկլէս. եկեսցէ սպարապետն քաջ. (Միհրան գնայ)։ Մեծ է ինձ՝ զի միւսանգամ տեսանեմ զնա. ցասուցեալ էի, այլ և զարմացեալ ընդ անմեղկելի արիութիւն նորա։

Լիսիմաքոս. Ահա գամ, Քսերքսէս. զի՞ կոչեցեր զիս։

Քսերքսէս. Այո 'ի հանդիսիս կամէի զքեզ։

Լիսիմաքոս. Առ 'ի լսել զնախատինս Ելլադայ, կամ թէ միւսանգամ կամիցիս խաղ առնել զինև։

Քսերքսէս. Կա՛ց, այժմ տեսցես։

ՏԵՍԻԼ ՎԵՐՋԻՆ

ՔՍԵՐՔՍԷՍ, ԹԵՄԻՍՏՈԿԼԷՍ, ՄԻՀՐԱՆ, ԼԻՍԻՄԱՔՈՍ, ՆԷՈԿԼԷՍ, ԱԳԵՍԻԼԱՅՈՍ

Միհրան. Ահաւասիկ Թեմիստոկլէս, տէր արքայ։

Քսերքսէս. Ընտրեցե՛ր ապա, Թեմիստոկլ, յանձն առնուլ զկամս մեր։ Ե՛կ արդ առ իս, մատի՛ր 'ի դիրկս արքայի՝ որ մեծարէն զքեզ։

Թեմիստոկլէս. Անսա վայր մի. (Ձեռամբ արարեալ)։

Քսերքսէս. Իսկ առ ինչ։

Թեմիստոկլէս. Զի ես եղէ արժանի այնմ. թոյլ տուր ինձ զգործն մեծ բովանդակել՝ յոր գամ, և ապա արկցուք միմեանց զիրկս։

Քսերքսէս. Ահաւասիկ բաժակ ուխտին 'ի վերայ սրբոյ սեղանոյն, ամենայն ինչ կազմ է, մատի՛ր և տո՛ւր երդումն զոր խոստացար, լու 'ի լու ամենայն հրապարակիս, և վրիժուցն Ելլադայ լիցի սկիզբն։

Թեմիստոկլէս. Սթափեաց, տէր արքայ, սթափեաց 'ի պատրանաց. առ քեզ խոստացաւ գալ Թեմիստոկլ, և ոչ յերդումն։

Քսերքսէս. Ո՞րպէս, մի՞չ դու ինքն...

Թեմիստոկլէս. Լո՛ւր ինձ, արքայ. լուիցէ և Լիսիմաքոս. լուարուք և դուք ժողովուրդք ամենայն. զձեզ այսօր ունիմ վկայ բանից իմոց։ Բաղդն ոխերիմ մատնիչ կամ ապաշնորհ ճգնի առնել զիս, և հարկ է զմին յերկուց մեղանաց առնուլ ինձ յանձն՝ եթէ ապրեցայց. այլ տուժիւք կենաց՝ զոր պարգև ծրի ետուն ինձ երկինք՝ եղէց անպարտ... ընտրեցի ապա մեռանել։

Լիսիմաքոս. Եւ որպէս։

Քսերքսէս. Ո՛վ գիտէ։

Թեմիստոկլէս. (կալեալ մատամբք զթոյնն). Այս՝ զոր ցուցից նժդեհութեան ապաւէն վերջին ընդ իս ածէի՝ զեղ պատրաստ մահուն, սա զգործն մեծ կատարեսցէ, և բաժակս սուրբ՝ լիցի մատուռակ. (արկանէ զթոյնն 'ի բաժակն)։ 'Ի նուէր յօժար զոհիս հաւատարմութեան, երախտագիտութեան և փառաց՝ դիք ամենեքին կացէք առընթեր։

Ագեսիլայոս. Ո՛հ մեռանի ուասիկ։

Նէոկլէս. Բաբէ՛ հիացումն։

Թեմիստոկլէս. Հայրենասէր հաւատարմութեանս, սիրեցեալդ Լիսիմաքէ, զքեզ առնեմ թողում քարոզ և վկայ. յանուն ոսկերաց իմոց թերևս զթացեալ անհարկեսցեն քաղցրութեամբ, և հայրենի գերեզմանացն առ որովք 'ի խանձարուրս զկենացն սուք ընչեցի՝ եթէ 'ի մահուս լիցիմ արժանի անիրաւութեանց բաղդին ներեալ լիցի։ Եւ մի դու, արքայ, ընդ երախտիս պարգևաց քոց զղջասցիս. 'ի դարս դարուց զարմասցին ընդ այն տիեզերք համայն. բաղդն դժպհի՝ չետ ինձ կենդանեաւ փոխարինել այնց. և

digitised by A.R.A.R.@

արդ, զոր 'ի շունչ վախճանիս հատուցանել կարեմ, ընկալ զերախտագէտ շրթանց խոստովանութիւն։ Բարեկա՛մ դիք, թէ ձեզ ուխտք վերջինք հոգւոց անպարտից իցեն լսելի, ընդ ամրածածուկ աջովդ ձերով ամուր պահեսցին ընտրեալդ ձեր Աթէնք. հովանաւորք 'ի վերայ արքային Արեաց, պահեցէք զնա և զաշխարհ նորա յաւէրժ անսասան. խաղաղութիւն և սէր առ իմ՝ հայրենիս՝ ազդեցէք 'ի նա. ընդ կենաց իմոց՝ և ցասման նորա եղիցի վախճան։ Ողջամբ կացէք, որդեակք իմ. ողջամբ մնա բարեկամ քաջ, ողջոյն ընդ քեզ, տէր իմ՝ արքայ. ողջամբ կացէք ժողովուրդք ամենայն. (Առեալ զբաժակն մատուցանէ 'ի բերան)։

Քսերքսէս. (Արգելու զնա) Դարձո՛ զձեռն քո, զի՞ գործես, եթէ կորիցես դեղակուր։

Թեմիստոկլէս. Իսկ ընդէ՞ր։

Քսերքսէս. Ոչ ներէ քեզ զայդ Քսերքսէս. (Առնու զբաժակն 'ի ձեռանէ Թեմիստոկլեայ)։

Թեմիստոկլէս. Եթէ զմա՞հ իմ արգելուցուս. այլ յարքայից և անդր է իշխանութիւնդ այդ։

Քսերքսէս. Ո՛հ, մի, (զգեստէ զբաժակն). կեցցես, դիւցազն ոգի, պարծանք Ելլադայ, և փառք անկապուտ աշուրցս մերոց։ Սիրեա արդ, ես տամ՝ հրաման, զործանին սիրոյ քո հայրենիս, և ես իսկ զնա սիրել սկսայց։ Եւ ո՞ տեսցէ զքեզ, երկի՛ր բարեփառ, այսպիսեաց ծնող դիւցազանց։

Ագեսիլայոս. }
Նէոկլէս. } Բա՛րէ, բա՛րէ։

Թեմիստոկլէս. Երա՞զք իցեն, ո՛վ դիք, եթէ զուարթութեան բանք. ո՛վ դէպք անակնկալ։

Քսերքսէս. Լուր ինձ արդ, Թեմիստոկլ, և զարմացիր յիս ընդ նախանձ բարւոյ։ Ահա 'ի բագնիս՝ ուր առնլութիւն անմահ 'ի քէն պահանջէի, ուխտ յաւերժական ուխտեմ ես այսօր խաղաղութեան Ելլադայ. (Երբեալ դնէ զձեռն 'ի բագին)։ Հանգիցէ այսուհետև Յունաստան 'ի պարսկայնոց զինուց անկասկած, և զանդորր բարութեան կենաց՝ յայնքանեաց քաղաքացւոյդ դաւանեսցի շնորհ։

Թեմիստոկլէս. Զքնա՜ղ յաղթութիւն. և է՞ մահկանացուի յայդչափ մեծութիւն 'ի վեր ամբառնալ։ Երջանի՛կ Ելլադա, բարեբա՛ղդ աքսոր։

Ագեսիլայոս. Բա՛րէ խնդութեան աւուրս։

Նէոկլէս. Ո՛վ բերկրութիւն անպատում։

Լիսիմաքոս. Զպայծառ մրցութիւնդ ձեր, ոգիք վեհազունք, թոյլ տուք ինձ ճեպել համբաւել յԵլլադա։ Որո՜վ խնդութեամբ և երախտագէտ մտօք՝ զայսքան շնորհիս զպարգևատուն և զպատճառ մեծարեսցեն արգեօք։

Քսերքսէս. Հանգիր և դու, Թեմիստոկլ, և վայելեա 'ի սէր արքայի։ Իսկ ես այսուհետև, ապարապեա իմ՝ և մտերիմ, և զորդի քո զԱգեսիլայոս ինձ փեսայացուցի՝ վերառեալ զնա յազգ իմ՝ արքունի։

Թեմիստոկլէս. Եւ Թեմիստոկլ այսքանեաց բարեաց զի՞նչ քեզ հատուսցէ։ Դուք, մարդասէր աստուածք, դուք ընդ իմ՝ հատուցէք զարժանն, և ինձ տուք սիրտ երախտագէտ մինչ 'ի շունչ վերջին։

Քսերքսէս. Կեանս քեզ խնդրեա 'ի դից, քաջդ, և լիցիս ինձ երախտագէտ։ Առաքինութեան եռանդն՝ օրինակաւ քով՝ ինձ ածեալ, առաւել քան զընկալեալդ տացես միշտ։

Որպէս ջահ 'ի ջահ 'ի մի կցորդեալ յաւելուն ճաճանչ,
Եւ նախանձորդաւ առաքինութիւն գործի բարդուած։

ՊԱՐՆ ԵՐԳԷ

Յառաքինւոյն ծոց
Փառացըն պերճ բոյ,
Եւ ազգին գորով եթէ վառի,
Ոչ ես 'ի տիպար
Մարդոյ տըկար
Իջանէ 'ի դաշտ մարտիկն արի։

Բոցատիպ շողեալ
Սուսերացըն փայլ
Պըսակ ոսկեկապ վառի Նըմա.
Մարտին ասպարէզ
Զըւարճ պարտէզ.
Եւ բոսոր արեան ծաղիկ ցօղայ։

digitised by A.R.A.R.@

Ու ամպք բարկածայթ
Կայծականց 'ի ցայտ,
Ու երկիր ժայթքեալ հուր ընդ նովաւ,
Սաստնի երբեք
Սիրտն ահաբեկ,
Ի փառացըն մահ լեալ դիմագրաւ։

Ո՛վ բաղդ նախանձողդ,
Ո՛վ կոյր և յողդողդ,
Ընդ առաքինւոյն դու զուր մըրցիս.
Անվէր և անխոց՝
Ըզպաստից քոց՝
Իբրև ժայռ ընդ ծով վանէ զալիս։

Ու բաղդ միայն քեզ,
Ո՛ Թեմիստոկլէս,
Այլ և հայրենիդ աշխարհ բընիկ,
Բազկաւ քով փըրկեալ,
Քեզ դարանեալ՝
Ըզփըրկողդ արար տարաշխարհիկ։

Դու մի՛ վըհատիր,
Հայեաց դու, դարձիր,
Ահա կողկողին առ ոտիւք քով
Բաղդ քո և աշխարհ,
Կոր և խոնարհ.
Անոխակալիդ ածեալ գորով։

ՑԵՐԻԻՐԵԱԼ Ի Հ. ԳԷՈՐԳ Վ. ՀԻՒՐՄԻՒԶ
ԱՐՔԵՊԻՍԿ. ՍԻՒՆԵԱՑ

ՊԵՏՐՈՍ ՄԵՏԱՍՏԱՍԻՈՅ

ՕՐՀԱՍԱԿԱՆ ՈՄՆ

Մի ոտս արդէն 'ի տապան, ես 'ի վայրէջ յոյն պատրաստ,
Զ 'ի հող անդէն 'ւ 'ի մոխիր լուծանիցիմ դատապարտ.
Իշխեցեմ ես, ո՛վ Աստուած, 'ի գութ ածել զքո զայրոյթ՝
Եւ դիմել ծոցըդ յանքոյթ։
Իմ չիք քեզ այլ 'ի նըւէր՝ 'ի մեղանաց քաւութիւն,
Բաց 'ի զոհէս աղաղուն և չորացեալ մահագոյն.
Վա՜շ բարութեան քում անհուն, չընորհէք քեզ, Տէր, մեծապէս,
Թէ զայն առ քեզ ժողովես։
Եհէ՛ տըրոց մեծագին, զի՛ հոյակապ պատարագ,
Ո՛ր այս նըւէրքըս իցեն, քանի՛ մեծ են իմ փափագ.
Եւ զիմըդ ժամն է պատկան, — մինչ ամենայն է եղծեալ
Ցաչս աշխարհի անարգեալ։
Սակայն այնպէս, իմ Փըրկիչ, 'ի յայս վիճակ չարալից,
Միայն այս է զոր կարեմ, զի այս նեթ մընայ ինձ.
Հազար եղո՛ւկ է ընդ այն՝ զի՛ նդ միտ ածի անագան
Ըզտըրտմալիր զայս վախճան։
Ցողորմ պայման անկեալ կամ, զօրութիւն զիս լըքանէ,
Թալուկ զինև, ընկճիմ ես, սիրտս 'ի ծոցիս բաբախէ,
Վախճան իմ գայ մերձենայ. 'ի մահուանէ պակուցեալ՝
Խիթամ ըզշունչ առնուլ տալ։
Ահաւասիկ եհաս ժամն. տանջի հոգիս 'ի վարանս,
Հա՛ս 'ի թիկունս, իմ փըրկիչ, և չընորհեա դու ինձ զայս,
Զի զհառաչանս իմ յետին և ըզտագնապ ցաւագին
Առ ոտս հեղից քոյ խաչին։

ՓԱԹՐԻՔՍ

digitised by A.R.A.R.@